ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հանրային ռադիոյի «Բարև,ես եմ».Մի թվայնացման պատմություն» հաղորդման վերաբերյալ

Հանրային հեռարձակողի խորհուրդը բողոք է ստացել «Հայաստան» համահայկական հիմնադրամից՝ Հանրային ռադիոյի «Մոռացված ֆիլմերի ստվերները» հաղորդաշարի հուլիսի 6-ի «Բարև, ես եմ». Մի թվայնացման պատմություն» թողարկման վերաբերյալ: Խորհուրդն ուսումնասիրել է բողոքի էությունը, ստացել է ռադիոընկերության արձագանքը և պարզել հետևյալը.

1. Հաղորդումը նվիրված էր «Բարև, ես եմ» ֆիլմի թվայնացման և վերականգնման աշխատանքներին, որոնք իրականացվել են Ազգային կինոկենտրոնի նախաձեռնությամբ և «Հայաստան» համահայկական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ: Այս հանգամանքով, հաղորդման հեղինակ Լուսինե Մանուկյանը տեսագրել է հարցազրույց հիմնադրամի տնօրեն Հայկակ Արշամյանի հետ:

Սակայն հաղորդման հիմնական բովանդակությունը կինոռեժիսոր Հովհաննես Գալստյանի ելույթն էր, որն ամբողջությամբ բաղկացած էր մեղադրանքներից՝ ֆիլմի վերականգնման աշխատանքների ենթադրյալ թերությունների, հանրային միջոցների վատնման և Ազգային կինոկենտրոնի ոչ արդյունավետ գործունեության վերաբերյալ: Ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանը, հեղինակի խոսքերով, «հարմար չգտավ հրապարակայնորեն զրուցել թեմայի շուրջ»:

Բողոքը հիմնավորելով, հիմնադրամի տնօրեն Հայկակ Արշամյանը գրում է. «*Ի սկզբանե, լրագրող Լուսինե Մանուկյանը, հարցազրույցի վերաբերյալ պայմանավորվելիս, նշել է, որ հարցազրույցը լինելու է «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակում ֆիլմի ընդգրկման մասին, ընդգծելով, որ Ազգային կինոկենտրոնի հետ ևս հարցազրույց է ունենալու: ...Հովհաննես Գալստյանի՝ որպես երրորդ կողմ հանդես գալու վերաբերյալ Հիմնադրամը տեղեկացված չի եղել, որի պարագայում Հիմնադրամը ուղղակի կհրաժարվեր հարցազրույցից՝ խնդիրը թողնելով ոլորտի մասնագետներին»:*

Կինոռեժիսորը խոսել է «հարկատուների միջոցների վատնումից», «պետական գումարների մսխումից», իսկ նրա խոսքը ընդմիջվել է հեղինակի՝ նույնքան սուր հարցադրումներով և «Հայաստան» հիմնադրամի տնօրենի պարզաբանումներով:

Ընդհանուր տպավորություն է ստեղծվել, որ, ի թիվս այլ պատասխանատուների, «Հայաստան» հիմնադրամը բարեխիղճ չի գտնվել իր հանգանակած միջոցները ծախսելիս: Արդյունքում տուժել է «Հայաստան» հիմնադրամի հեղինակությունը:

Հանրային հեռարձակողի խորհուրդը գտնում է, որ հաղորդման մտահղացումը ամբողջացնելու փուլում խախտվել է *Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական Կանոնագրի* հետևյալ կետը.

2.6. հարգել հարցազրույց տվողի՝ որպես հարցազրույցի տեքստի նկատմամբ համահեղինակի, իրավունքները:

«Հայաստան» հիմնադրամը չէր կարող հանդիսանալ հնչեցրած մեղադրանքների պատասխանող կողմը, ուստի լրագրողը չարաշահել է հարցազրույց տվողի վստահությունը, նրան հարվածի տակ դնելով և նրա խոսքը կոնտեքստից դուրս օգտագործելով:

2. Բողոքի մեջ նշվում է հաղորդման մեկ այլ դրվագ ևս, որտեղ հեղինակը, խոսելով ֆիլմի վերականգնման աշխատանքները լատվիական «Լոկոմոտիվ կլասիկս» ստուդիային պատվիրելու մասին, մեջբերում է կինոռեժիսոր Հովհաննես Գալստյանի խոսքը. *«Հայաստան» համահայկական հիմնադրամի գումարները, ինչպես նշված է Հիմնադրամի կայքում, նախատեսված են ծախսել Հայաստանում կամ Արցախում, իսկ այդ գործարքով դրանք ծախսվել են Հայաստանից դուրս»:* Այնուհետև, արդեն իր անունից հեղինակը հարցնում է. *«Արդյո՞ք «Հայաստան» համահայկական հիմնադրամը հակասել է իր գործառույթներին և ի՞նչ սկզբունքով է որոշվել ֆիլմը թվայնացնել ոչ թե հայկական, այլ լատվիական ընկերությունում»:*

Այս հարցերի պատասխանը հաղորդման հեղինակը չի տալիս: Մինչդեռ, հիմնադրամի տնօրենի հետ զրույցի ընթացքում կարելի էր պարզել, որ ֆիլմի թվայնացման և վերականգնման նպատակով դրամաշնորհը տրվել է Հայաստանի Ազգային կինոկենտրոնին, այլ ոչ թե օտարերկրյա ընկերությանը:

Հանրային հեռարձակողի խորհուրդը գտնում է, որ լրագրողը խտրական վերաբերմունք է ցուցաբերել փաստերը հրապարակելիս: Խախտվել է *Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական Կանոնագրի* հետևյալ կետը.

1.1. մինչև հրապարակումը ստուգել ցանկացած աղբյուրից ստացված տեղեկությունների հավաստիությունը, չկոծկել եւ չխեղաթյուրել փաստերը, չհրապարակել ակնհայտ կեղծ տեղեկություններ.

Հանրային ռադիոյի ունկնդիրների համար այդպես էլ անհայտ մնաց, թե ինչու է Ազգային կինոկենտրոնը «Բարև, ես եմ» ֆիլմի վերականգնման ավարտական փուլը պատվիրել լատվիական ընկերությանը: Իսկ ահա Ֆեյսբուքի օգտատերերը հաջորդ օրն իսկ ծանոթացան հարցի բոլոր մանրամասներին, որոնք ներկայացրել էր «Բարև, ես եմ» ֆիլմի թվայնացման և վերականգնման աշխատանքների պատասխանատու Վիգեն Գալստյանը, մեկնաբանելով ռադիոհաղորդման թերի բովանդակությունը: Ակնհայտ է, որ լրագրողը բավարար ջանք չէր գործադրել խնդիրը լիարժեք և բազմակողմանի ներկայացնելու համար:

Եթե նույնիսկ պատասխանող կողմը հրաժարվել է մասնակցել հաղորդմանը, դա հիմք չի տալիս հանրային լրատվամիջոցին հրապարակել չստուգված տեղեկություններ: Լրագրողը

նման դեպքերում պարտավո՛ր է ներկայացնել հակառակ տեսակետը այլ եղանակով, օրինակ, դիմելով ոլորտի մասնագետներին, կամ՝ իր անունից վիճարկելով խնդրահարույց պնդումները։

Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական Կանոնագիրը պահանջում է.

1.2. հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ողջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը.

Հանրային ռադիոյի «Բարև, ես եմ. Մի թվայնացման պատմություն» հաղորդումը, հիմնվելով միայն կողմերից մեկի կարծիքի վրա, չի համապատասխանում Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական չափանիշներին։ Պատասխանատու լրագրությունը ենթադրում է օբյեկտիվ, հավասարակշռված և անկողմնակալ վերաբերմունք հանրային նշանակության հարցերին, հատկապես, երբ կա մասնագիտական բանավեճ և փոխադարձ մեղադրանքներ։

Հանրային հեռարձակողի խորհուրդ

18 հուլիսի, 2023